



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Գր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	6 "
Արտասահմանի համար	15 "
Վեցամսեայ	8 "

Ամերիկայի համար	3 ցր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	1.50 "

Իսկուհական տղայ տասն չորս տարեկան համար 40 ս իսկ վերջին տարեկան համար 20 սակարկել է. երեք տարեկան անգլալեզու համար 20 0/0 զեղչ կրու շալ:

Վաճառելի համար մ'ոք 40 սակարկել



Նախակ է գրամ զրկել ներագործարանի հասցիին:

Редакция на вѣстникъ "Шаржумъ" (Auriclie) R. P. Kalednitskaya, Mechtharistengasse Vienne Varna (Bulgarie)

Արտասահմանի համար մեկին ( ) 20 ՍԱՆԹԻՄ ( ) Պուշկարիոյ համար մեկին ( ) 15 ՍԱՆԹԻՄ ( )

Գրութիւնք եւ չնն տրուի

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱՎԱՅԻ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐ՝ ՏՄԵՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇՈՒԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱԲԱԹ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆԿԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՈՅՆ ԳԱՆԳԱՅԸ

Ի դուր առիթը ծուկի եկած՝ Պատուէրներուդ ուշադիր՝ Հատուցի. տէ՛ր, որ անկասկած Պիտի լսես իմ խնդիր:

Թուսացի քեզ՝ ժողովուրդ սէր Շուրթիս վրայ միշտ պատրաստ, Բայց ամեն տեղ մահ կըստպատէր ինձ. կ'իշխայի զիտապատս:

Սիրեցի զաշտ, արտ, և արօր, Իրեւ բարի գիւղացի, Բայց չը տեսայ զեւ բարի օր, Կարօտ եմ շերտ մը հացի:

Աղոթեցի քեզ ձեռամբարձ՝ Անուն սիրոյդ ապահով, Բայց փոխարէն տըրի անգարձ Վըճի՛ս պատժել զիս մտնով:

Կեանքիս մէջ զկնք շատի բընա՛ւ, Բայց ապրեցայ վիրաւոր. Լըքէ՛, ո՛վ տէր, չափը անցաւ. Արդէն շատոնց իրա՛ւ որ:

Նըւրբական օջախ, պատի՛ւ Շատոնց եղան ստնակիտս. Թալանեցին տունըս անթիւ Աւազակներ փոխի ի փոխ:

Հէք լաճերըս բոպիկ, տըղլոր Անօթի են, կը դողան. Հայու դժբախտ երկրին բոլոր Կարձես անէճք կը տեղան:

Ինչո՛ւ, ո՛վ Տէր, ունիս յօծար Կամքը տանջել մեզի միշտ. Է՛ր կը հակի կըսի՞ց յիջար Դէպի հըզօրն ամբարիշտ:

Է՛ր կը նայիս այդքան անփոյթ Հէք ազգի մը վըրայ հեզ. Ուժըդ, կարբըդ աներևոյթ Որո՛ւ համար կը պահես:

Միթէ, ո՛վ տէր, զո՛ւն ալ կ'ատես Աղօթքը լուռ, ընդունայն. Միթէ զո՛ւն ալ պիտ' ազատես Կուռուղները միմիայն:

Միթէ՞ պէտք է տարածէ մահ Քայած անցած տեղը մարդ, Որ կարենայ ապրիլ անահ՝ Իր տանը մէջ կուշտ, զաւարթ:

Միթէ՞ միայն թոյլ ստրուկին Վայել հաւատ, յոյս ու սէր. Միթէ՞ հարկ է որ այր ու կին Պաշտենք մենք ալ հուր, սուսեր:

վ է Տ Ա

ՊՆՅՄԱՆՆԵՐՈՒ ՊԱՀԱՆՁԸ

Բնութեան մէջ ամեն երեւոյթ իր պատճառը ունի պարզ կամ բարդ, Հասարակական երեւոյթներն ալ, ազգի մը, ժողովուրդի մը կեանքին մէջ տեղի ունեցող ամեն տեսակ փոփոխութիւններն ալ այդ պատճառակա՜նութեան օրէնքէն զերծ չեն: Հասարակական գիտութիւնները, իրենց զղիւստը ճիւղերով, քաղաքական տնտեսութեամբ, պատմութեամբ, իմաստասիրութեամբ ու բնական գիտութեամբ, կուզան հաստատելու որ ցեղի մը, ազգի մը կեանքին մէջ տեղի ունեցող երեւոյթներու սկիզբը տնտեսական պայմաններու մէջ կը թաղուի:

Արդեւնաբերութեան միջոցներու և ամէն տեսակ գործիքներու ձեւէն կախուած է հողատիրական և սեփականութեան կերպերը, իսկ այդ կերպերը կը կազմեն տնտեսական պայմանները: Արդ՝ հասարակական կազմի մը վերջնական հիմք կը գտնուի ուրեմն արդիւնաբերութեան միջոցներու մէջ և անոնց զարգացման ու փոփոխութեան հետ կը զարգանան և կը փոփոխին տնտեսական պայմանները. իսկ քաղաքական, կրօնական, բարոյական ու մտաւոր հասարակական ամէն կազմ, ամէն ձեւ կը հանգչի տնտեսական պայմաններու վրայ:

Երբ ազգի մը մէջ փոփոխութիւն մը տեղի կուսենայ որ նշանակալից է, որ անոր քաղաքական, մտաւոր ու բարոյական կազմերը առանձին կամ յաճախ բոլորը միասին փոխուի բնութեան, անպատճառ ատիկա արդիւնաբերութեան միջոցներու, տնտեսական պայմաններու մեծ փոփոխութեան մը, հասունութեան մը արդիւնքն է: Կեանքի նոր իտէալ, նոր պահանջներ, մէկ խօսքով նոր գաղափար ու ինչչէն չը ծնիր, եթէ նոյն իսկ այդ գաղափարը խիստ վերացական ու բանաստեղծական կերպով արտայայտուի: Կեանքն է որ գաղափարը կը ձընի և ո՛չ թէ գաղափարը, կեանքը կը շինէ:

Երբ ժողովուրդ մը իր կեանքի այս կիսմ այն շրջանին մէջ որոշ ձգտումներով, որոշ իտէալով իր վիճակի մէջ հիմնական փոփոխութիւններ մտցնել կուզէ, և երբ մանաւանդ վճռական, անզուսպ և բուռն կերպով իր այդ նըպատակին կը դիմէ, անոր իրականացման համար, ամէն խոչտանգանք, ամէն զրկանք յօժարակամ կը տանի, ըսել է այդ ժողովուրդը կը գտնուի տնտեսական պայմաններու բռնաւոր

և ստիպողական հարկին տակ, զգացողութիւնը, գիտակցութիւնը ունի նիւթական պայմաններու մզիլ զօրութեան, Իր գործունէութիւնը ի՛նչ վերացական բառով ալ արտայայտէ, իր գոհողութիւնները ո՛ր իրաւունքին համար ալ կատարէ:

Փոթորիկէն սուս լաւ դիտողներ կրնան ամպերը մատնանիչել. բայց չեն կրնար ծագելիք փոթորիկին ծաւային և ուղղութեան վրայ ազդել: Այդ մարդոց դերը ծանուցանելու, պատահելիք երեւոյթը գուշակելուն մէջ կը կայանայ: Կեանքի որոշ պայմանները նկատող, կամ երեւոյթներու պատճառները պարզողներն ալ զգուշացնողի, գիտակցութիւն տուողի դերը միայն ունին: Իրենք չեն հարկ եղած պայմանները ստեղծող և հասարակական երեւոյթը յառաջացնողը:

Երկրպիս մէջ հայ ժողովուրդը երկուեքի մէջ է: Հասարակական կամք մը կայ անյողողող ու անյեղլի որ յեղափոխութեամբ կարտայայտուի, որ գոհողութիւններու կը տուայ, զժուարութիւններու կը զոյգմանայ: Ո՛ր կէ ծնաւ այդ կամքը, ո՛վ ստեղծեց անոր զօրութիւնը...: Ո՛վ կրնայ ըսել թէ մեր հասարակական կեանքի մէջ տեղի ունեցող այս լայն ու խոր երեւոյթը զինքը ծնեցնող պայմաններէ զուրկ է, պայմաններ որոնց հիմը տնտեսական է. ո՛վ կրնայ ւշադրել թէ հայ ժողովուրդը արիւնի ճամբուն մէջ նետուած է առանց գիտակցութեան, առանց դիմքը այնքան յանդուգն կերպով գործունէութեան զնող զօրութիւններու, պայմաններու զգացողութեան...:

Կ. ՊՈՇՆԱՆ  
10 մարտ 1903  
Յիւլիոյէ

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի օրը կրկին պ. պ. Խուշփուլեան և Չիթճեան խօսեցին Յենարալ սրահում. այս անգամ բաւական սոււարաթիւ ունկնդիրներ յաւաքեցին: Խուշփուլեան որոշեց Հայկական յեղափոխութեան առաջին ե. բուն նպատակը որ է Հայկական անկախութիւնը. ինչ ձեւի տակ էլ որ լինի նա, խօսեց այդ անհրաժեշտ նպատա-

կին հասնելու միջոցների վրա, գիւշապատական միջոցները անպէտք հաշակեց, պարզեց որ առօրեայերը մասնակցում են տաճկահայ յեղափոխութեան ոչ միայն իբր սրտացաւ եղբայրներ, այլ իբրեւ նոյնպէս փտանգոված ու ամբողջ հայութեան փրկութեան վրա մտածող հայեր, ուրեմն ոչ մի խտրութիւն չէ կարելի դնել նրանց և տաճկահայերի միջեւ, ինչպէս և աշխարհի բոլոր անկախութեամբ ցրված հայերի միջև: Ծեշտեց թէ ներկայումս, քանի որ փրկութեան միակ միջոցը յեղափոխութիւնն է, ամբողջ հայութիւնը իր բոլոր ուժերը պէտք է լարէ յեղափոխութիւնը զօրացնելու համար, որովհետեւ առանց հայութեան պէտք է ոչնչանան մեր բոլոր եկեղեցիները, դպրոցները և ուրբանցները:

Այս անգամ էլ Խուշփուլեան խօսեց յեղափոխական խելքը և զգացմունքը իրար միացրած և բաւական ազգեց ունկնդիրների վրա:

Խուշփուլեանին հետեւեց պ. Չիթճեան. նա էլ շեշտեց ամբողջ հայերի միատեսակ մտածելու, միասին գործելու փափազը և անհրաժեշտութիւնը ու յայտարարեց որ հայերը միայն երեք սղբեր են որով պէտք է առաջնորդվեն մեր փրկութեան գաւարին գործը առաջ տանելու համար. որոնք են ազատ հայրենիք, ճշմարտութիւն և հայերի միացած գործունէութիւն:

Խուշփուլեանին ճանաչում ենք. Չիթճեանը մեզ համար անծանօթ է և բաւական յոռի կարծիքներ ունեց նրա Ամերիկայի գործունէութեան մասին լսած տեղեկութիւնների հիման վրա:

Եթէ նրա վառնայում յայտնած կարծիքները անկեղծ են. շնորհաւորում ենք և ցանկանում ենք որ նա իր այդ ուղղութիւնից չը շեղվի: Իսկ եթէ կեղծ են, նրանք ոչ մի վնաս չեն կարող հասցնել բոլորգորահայ գաղութին, որովհետեւ այստեղ մարդկանց միայն խօսքով չեն դատում...:

Բեմի վրա բանախօսների հետ միասին այս անգամ գտնվում էր և ճանկիւլեանը, այնպէս որ երկու բանախօսները, որոնք միայն և միայն հայ յեղափոխութեան ու ցաւերի մասին էին խօսում, ունկնդիրներին չը ներկայացան միայն Գուրպէթ օղլուի հետ, որը զեռ հարիւր անգամ կարող է, յարմար առիթին «Հասան Ծէֆֆը» դառնալ բայց ոչ երբէք հայ յեղափոխական:

Մեր երկու գործիչները բեմից ճառեցին հայ յեղափոխութեան բարոյականութեան մասին. ու այդ բարոյականութեան ամենախիստ նախանձախնդիրներէն և իրենք պէտք է լինեն: Մեզ պէտք է ամբողջ մաքուր յեղափոխական տարրերի միութիւնը, մաքուր որոշ, անդրդուի յեղափոխականներ. մանաւանդ նրանք որոնք ձգտում են ժողովրդին իրենց ետեւից տանել, երբէք իրենց թոյլ չը պէտք է տան Գուրպէթ օղլուները պէս արպիւրի մեծները, որպէսզի պարզ ժողովուրդը օրինակով սովորի յեղափոխական բարոյականութիւնը ճանաչել: Յեղափոխական բարոյականութեան շարք ամեն տեղ մէկ է. և այդ շարքին ուղի չի հետեւում նա կեղծ է և դաւաճանում է յեղափոխութեան:

ՎԱՐՊՈ

### ԼՍՈՂԻ ՅՈՒՇԱՅԵՏՐԷՆ

Ս Ե Ի Ա Ն Ա Կ Ն Կ Ա Լ Ը

Ուստի եմ: Սենեակի մը մէջ միայնակ նստած՝ ծանրածանր կը խորհիմ, կը տարուբերիմ ինքզինքս, անգամ մը «Հնչակի» յունվար 1-ի առաջին թիւը ձեռքս կառնեմ. պաշտօնական յայտարարութիւնը զգուշանք կը կարդամ եւ անգամ ալ ուրիշ «Հնչակ» մը — ուրիշներու խօսքով Փարիզեան կեղծ «Հնչակ» — գրպանէս կը հանեմ, կսկսիմ կարդալ ու կարդալ, բայց չեմ կրնար ինքզինքիս գոհացում մը, վճարական համոզում մը տալ: Ու աչքս սենեակին պատուհանէն դուրս կը յառնեմ, մեղամարտիկներ կը դիտեմ տեղատարափ անձրեւին, եւ ահա երեք հովանոցաւոր պարոններ դուրսի դռան զանգակը կը քայեն: Պատուհանին առջեւէն ելլելով սենեակին մէջ կը քալեմ, մոլորածի մը պէս ընկերակիցի մը օգնութիւնը կուզեմ, շուարած մտքիս համոզիչ մը գէթ:

Մինչ այս մինչ այն, «վերարկուներ հանեցէք» ձայն մը կուգայ առկանջիտ, չեմ ուզեր հաւատալ, երեւակայութեան մէջ ընկզմած եմ կըսեմ եւ, վայրկեանական ձայն մը եւս որ Վար. Մ. նստեցէք կը հնչէ առկանջիտ: Ալ գիտցայ որ այն երեք հովանոցաւոր պարոններն էին, ու անմիջապէս աթոռ մը սենեակիս դուրս մօտը քշելով նստեցայ:

Ոստակցութիւնը կսկսի երեքին մէջ:

— Պր. Մ., արդէն դուք համակիր

էք մեզի, բայց այս քանի մը շարժուման անցուցած զրոյցները, գրութիւնները կարելի է ձեր միտքը պղտորած է, կա՛ն մէկը, որուն անունն է՝ Ս.:

— Բանիցս արդէն պր. Մ. ինծի փափաք յայտնած է այս խեղաթիւրումներուն համար, կըսէ միւս որուն անունն է՝ Յ.:

— Համակիր—Այո՛, անկեղծ սրտով համակրած էի Հնչակ. կուսակցութեան, բայց այս վերջին «Հնչակ»-ը, Պատուհանի «Պաշտօնական յայտարարութիւն»-ը փաստացի գանձելով, ա՛յլ չեմ հաւատարմորէններուն:

Ս.—Մերիներ մերիները ըսելով ի՞նչ ըսել կուզէք, միակ ու միացեալ Հնչ. կուսակցութիւն մը կայ պր Մ.:

Համակիր—հասա ի՞նչ են երկու Հնչակները:

Ս.—Անանկ բան չիկայ, միայն մէկ Հնչակ կը հրատարակուի:

Համակ.—Ինչո՞ւ կը ստէք, ահա. ւասիկ զրպանս է երկու Հնչակն ալ:

Յ.—Ճիշդ էք բայց ուստի լեզուով գրուած «Հնչակ»-ը կեղծ է:

Ս.—Հասա՛, այդ Հնչակը նազարէկի կողմնակիցներէն կը հրատարակուի, մանաւանդ որ Տաճկահայերս՝ Ռուսահայերու հետ գործ ունենալ չենք ուզեր:

Համակ.—Ատանկ ապուշ ու եղբայրաբաւ խօսքեր մընէք. ես խըմբել չեմ. այն Հնչակը զոր դուք կուզէք պաշտել՝ կեղծ է, այդ կեղծ է եւ Փարիզ Զօպանեանի տպարանէն կելլէ ան ալ Զիթեանի հիմնադրութեամբ:

Ս.—Կը սխալիք, պահն անոնք որ Հնչակ. կուսակցութեան զեմ դաւաճարութիւն կը լարեն, «Չ. Հայրենեաց»-ի պաշտօնական յայտարարութիւնով կը վտանաւորին, կարգացած չէ՞ք, նոյնպէս այդ Հնչակը, հնչակեան կուսակցութեանն զուրս ձգուած խմբակէ մը կը հրատարակուի:

Համակ.—Ամեն այն հնչակեան անհատ որ ձեր կարգ մը պաշտելիներու գեղձումները, դաւաճարութիւնները իրոյս կը հանէ, բնական է որ կը վտանաւոր: Օրինակի համար, Վահան Բիզանդեան, Ոսկան Օտպաչեան եւ ուրիշներ, որոնք ձեր մոթ կողմեր կը պահէին, հերոսներ կանուանէիք. իսկ երբ պատուեցին զոյ Արգուի դիմակը, մատիչներ, լըրտեսներ կողքիք զանոնք, Միլիթար՝ որ բացաւ կուսակցութեանը զեկազարներուն սեւ քօղը. Չ. Հ. ի խմբակը, կամ Արդու—Փափազի գործիք եղող խմբակը, իր աննկարագրելի հայհոյանքները սկսաւ տեղալ անոր վրայ, «Հայրենիք»՝ որ իր էջեր բացաւ այս բոլորին, դաւաճան, երկպառակիչ հոչակեցիք վաւաճանը: Եկեղեցեաց Գուրգէն բնածին մը ազատ գրութիւններուն հանդէպ վըրտանանի, ամենայն սիրով հիւրընկալուեցան «Չ. Հ. ի» մէջ, ու դուք ուրախութեամբ լեզուապատու կըլլալիք. իսկ երբ օրինակ առաջապատու պատուանի մը պէտքը տեսուեցաւ, նահ. վարչ. պաշտօնապէս մերժեց առարկելով թէ անհատով չի կրնար զբաղիլ: Եւ այսօր որ խնդիրը դատարան ինկած է, վիւնդոյն Եկեղեցեաց Գուրգէնի համար հարիւրաւոր սուլարներ կը ծախուին կուսակցութեան կողմէն: Ասոնց բոլորին ալ զրպարտութիւն ըլլային ապացոյցներով, սօքրիմաններով հաստատուած չըլլալով, խմբակի մը կողմէն միայն հասարակութեան միտքը կը պղտորեն:

Յ.—Մի բարկանք պր. Մ. ձեր ըսածներ իրաւացի են, բայց ոչ բոլորովին: Հնչակեաններու մէջ կայ ի՞նչ ու կան այնպիսի ստորներ, բայց կամայ կամայ կը վտանաւորին:

Համակ.—Ա՛յլ չեմ հաւատար, քանի որ ձեր մէջ կայրին Արդուեաններ, Փափազեաններ, Զիթեաններ եւ Շահրիմաններ, վո՛յ ձեզի որ կը հաւատաք թէ հնչակ. կուսակցութիւն պիտի ապրի եւ, վո՛յ ան ազգին՝ որուն ճակատագրին այդպիսիներու քմահաճոյքին խաղալիք դարձած է: Կը խնդրեմ պր. Յ. վերաբերու ստէք. ալ չեմ կրնար այդպիսիներու վրայ խօսիլ. դաւաճաններ՝ ըր:

Ս.—Ինչո՞ւ կ'աճարէք, դուք ըսելիքերիդ լիմնացիք, պէտք է նաեւ գիտնաք Դաշնակցականներու զեղծութիւնները. «Հայրենիք»-ի զրպարտութիւնները, «Վաւաճանի» Պր. սոյ մէջ կատարած տխուր գերն եւ ուրիշ կարգ մը արարքը:

Համակ.—Ընդհակառակը, «Հայրենիք»-ը ձեր բոլոր քսութիւններ երեւան հանելուն, զրպարտիչ կըլլայ, այնպէս չէ՞: Մանաւանդ «Հայրենիք»-ը եւ խմբագրին ի՞նչ պատասխանատուութեան սակ կը ծանրանան, քանի Հնչ. անկեղծ անհատներ ձեզ կը մերկացնեն: Երկրորդ՝ ես Դաշնակցականի խօսք չեմ ընէր. ստոնք բոլորը դուք զձեզ պաշտպանելու վրան բաց սուտեր են. նախ ձեր ազատները ճանչցէք եւ ապա Դաշնակցութեան վրայ խօսեցէք: Եթէ ձեր համակիր շարքը այսպէս է, «կուսպայ» ուրեմն:

Համակիր պարզեմ բարկութեամբ դուրս կելլէ, իսկ միւս երկուքը կը շարունակեն խօսքերնին:

Յ.—Ի՞նչ անհեթեթ խաբբեր կընես Դաշնակցականները փաստ բերելով:

Ս.—Հասա՛ ինչ ընեմ՝ ուրիշ պատասխան չունէի տալիք ըրած հարցումներուն:

Յ.—Մենք մեր վէթըր չի կապած, ուրիշներունը կապել կուզենք, իրաւ որ շատ թօհափ գործիչներ ունինք մոլորներս:

Ս.—Բանի որ ուխտած ենք հաւատարիմ մնալ մեր կուսակցութեան, պէտք է ամեն զոհողութեամբ կատարել Դաշնակցութեան, Եկեղեցեաց Գուրգէնի մը համար հարիւրաւոր սուլարներ կը ծախսէ նահ. վարչութիւնը որպէսզի «Հայրենիք»-ը եւ վաւաճանն ստանալու ընէ:

Յ.—Մեզ 145 տալարին որ միամտօրէն տուի բուն գործին, մինչդեռ անդին Փափազեան եւ կարգ մը խայտատակներ, իրենց անհատական կիրքն յագեցնելու համար ի՞նչ քստորնութիւններու կը դիմեն:

Ս.—Լաւ կըսէք, բայց սա վստամին ըրածը չափը անցաւ:

Յ.—Մեր թէ անորը, ինչե՛ր չըրինք խեղճին զըլլուն, Դեռնոք վարչ. զպետին կ'երբն խօսեցնելու համար, թերթը բերանը խոթեցինք. քանի անգամներ ծեծեցինք. զրածները սուտ հոչակեցինք, ու ես ինչ գիտնալով ինչե՛ր չըլլինք, եւ այն բոլորը ճշմարտութիւնը խօսեցնելու փոխարէն վարձարեցինք: Ալ չեմ կրնար զիմանալ կարգ մը, չի տեսայ իրաւունք մը որ մեր եղած ըլլաւ. չի տեսայ գրութիւն մը գող—Արդու—Փափազ—Զիթեանէն, որ իրենց վրայ ծանրացած ամբաստանութիւններուն մէջիկ մէկիկ, անհատապէս պատասխանէին: Ալ կը բաւէ քանի հուր գործիքը կըլանք:

Ս.—Ձեզ գիտեր ի՞նչ ըսեմ, ինչ որ ես գիտեմ, նոյնը դուք գիտէք. խնդրէն անձանօթ մը չէք որ պաշտպանէի կուսակցութիւնս:

Յ.—Պէտք է բողբոջեմ այս անկաւ, նեղի ճամբայէն ազատուլ համար:

Ս.—Որո՞ւ պիտի բողբոջեմ. վստահեղիք որ եթէ չըլլէ միակ հանեցք մատնիչ կամ լրտես կամ խառնակի սխալուք ճակատնուս կը փակցնեն: Սոսկէս կը վերջանայ խօսակցութիւններն և. սոյն սողերն ստորաբողն այս «Սեւ Անակնկալին» հանդիպելով, ա՛ցածը կը թողու մըլտիս ընթերցողին:

Յ. Ղուկասյան  
11 մարտ 1903  
Ուստր

### Ի՞ՆՉ ԵՂԱԻ ՀԵՏԵՆԱՆԻՔ — ԽԱՅՏԱՌԱԿՈՒ ԵՑՎ՛ —

Երբէք զիտաւորութիւն չունէի սիրելի ընթերցողները հնչակեան կուսակցութեան խնդրով վարպետներու, եթէ յեղափոխութեան պատուը ազգին եւ զած չըլլար:

Արդարեւ, ամէն անկեղծ հնչակեաններ, մինչեւ այժմ լուսթիւնը միութեան շահաւոր նկատելով, խնդիրը հրապարակած չէին. բայց վերջիս իրերը այն աստիճանի հասած էր որ, եթէ լուսթիւնը մի քիչ եւս շարունակէր, կուսակցութեան պատուը գրեթէ վերջի հաւասար պիտի իջնէր. այդ պատճառաւ ամէն հնչակեան ընկերներ, այսօր իրենց պարտք մը սեպելով, եւ արդար բողբոջի ձայնի բարձրացնելով, կարգ մը ճիւղերը դիմակազուրկ կընեն:

Եւ մենք, իբրեւ անկեղծ հնչակեան մը, կուսակցութեան պատուոյն վաղուց նախանձախնդիր ստիպուած ենք սոյն գործիչներ ձեռք առնելով, այդ նախըմ կատարած մանչբու մասին հրապարակաւ մէկ երկու խօսք ըսել:

Ձեք ուզեր հոս ա, դ. 96-ի տխրահոյս, պատակաւորապէս ու նախըմ կատարած սխալներով, կուսակցութեան սփէջ գործուած ս. որ էն գրիքները մի առ մի մատնանջել, որ արդէն ամէն անկեղծ հնչակեաններու յայտնի է. միայն սա չափը կընենք թէ, կուսակցութեան գլխին նորէն այդ խայտատակ կատակերգութիւնն է որ կը խայտալի: սա տարբերութեամբ թէ, այս անգամ դերակատարները պատակաւորապէս խնայող մանչբոյն են, որ մաս մը միամտի վերակատակներու կողմանէ կատակածելի ընտրութեամբ մի քանի ներք հնչակեան կեդրոնի մէջ անգամ սպրդած էին, որ իրենց համբաւին հրահանգները կէս տա կէտ կատարելու համար:

բայց ի՞նչ եղաւ հետեւանքը—  
խայտառակութեան—

Ինչպէս և այդ նազը մի կաւառ  
լրտեսի մանչերը, ըմբռնած ու  
ընդունած էին առած քայլեր-  
նուն անհաշիւ ու սպորէն ըլլալը  
սակայն իրենց ընկերքը նախա-  
պէս որոշած ըլլալով, ալ չէին  
կարող ետ առնել իրենց այդ ցո-  
ւապար որոշումը:

Իայց ի՞նչ եղաւ հետեւանքը—  
խայտառակութեան—

Արա Շահինի

903 մարտ 10

Պուզրէշ

Ռուսմանիս

ԱՉՍՏ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասարակական կամ համայնական  
խնդիրներու մէջ, տրամաբանական  
անենապարզ պահանջումով իւրաքան-  
չիւր անհատ, իրեն, թէ բարձր և  
թէ համեստ նուազութեամբ, ան  
վիճելի իրաւունքն ունի իր կարծիքն  
անկերպարան կերպով յայտնելու և  
որպէսզի իր յայտնութիւններն արդա-  
բացի ըլլալով հանդերձ օգտակար ազ-  
գեցութիւն մը ստեղծեն, անհրա-  
ժեշտօրէն կը պահանջուի, որ նա,  
հանրային գոյն ունեցող իր հայնա-  
ցակէտերը յանայ հիմնել անկողմնա-  
կալ, անշահախնդիր և ուղղամիտ  
գաւառութեան վրայ, ապա թէ ոչ,  
հուրը մարելու տեղ հրդեհի պատճառ  
կըլլայ անհիճեթօրէն:

Ժամանակէ մը ի վեր, ճիշդ այս  
կերպ կո, ծանարար հրդեհի մը տխուր  
պատահումին հանդէպ կը դատնուին  
մեզ հետ և շատեր զխեղով արգահա-  
տանքով Հնչ. կուսակցութեան այս  
վայրկինիս անցուցած ջղային գալա-  
րու մները և եղկելի երկունքը:

Իրականութիւններու այս դառն  
կացութեան վրայ, իբրեւ անգամ հայ  
համայնքին—տարրական միեւնոյն ի-  
րաւունքով—քծախնդիր անոր նուր-  
բական շահերուն և հետեւող մասնա-  
ւանդ զայն ազատագրելու ճակատագ-  
րուած «անխտոն և Ս. Յեղափոխու-  
թեան», պարտք կը համարիմ ներկայ  
անկախ ու անվախ գիտողութիւններն  
ընել՝ առանց անհատական նկատումի  
և առանց նոյն իսկ յարաբերութիւն  
ըր ունենալու Հնչ, կուսակցութեան  
մը և է հատուածին հետ:

Մարդ ըլլալ՝ չգգալ, հայ ըլլալ՝ չը  
հետաքրքրուիլ երեւան հկած սրտխառ-  
նութեամբ խաղաղութիւններու դէմ, ան-  
կարելի է և այս տեսակ պարագա-  
ներու մէջ, լրտութիւնը՝ վատութիւն,  
անտարբերութիւնը՝ մատնութիւն կը  
նշանակէ բարից անսահման առումովը:  
Ու ինչպէս չը զարմանալ ու չը  
զայրանալ, մասնակցութիւն ազգ կու-  
սակցութիւն մը իր երկարամտայ շատ  
ու քիչ բարձր դիրքէն յանկարծ գա-  
հալթօրէն զլրտուելով անկողմնամենա-  
ահարկուն կուսակցայ, վրուզումի է՛ն  
անկանգնութիւն կ'ենթարկուի. այս ալ  
ինչո՞վ, Գիտէ՞ք.— Բնանի մը անսիրտ,  
անգոյն և աննկարող իր պարագիտնե-  
րու աքայիովը:

Արդարեւ, ամէն ազատագրուած  
ազգեր ունեցած են իրենց յեղ. կազ-  
մութիւնները զանազան ու հանկընդէմ  
կուսակցութիւններով, սակայն ա-  
նոնցմէ և ոչ մին այնքան դաւած չէ  
նպատակներու այդ նուիրապետին,  
ազգային փրկարար դատին, որչափ

Հնչ. վերակազմեալ հերձուածի յա-  
ջազկոտ ու հոտած հերոսները՝ Ար-  
զուեսն, Գրիգորեան, Սոփեստ վա-  
հանիկ և հոսոս Չիթճեան, հապա  
Փափազեան կոչուած կեղծոտ կծորի-  
ճը, անոր անունն անգամ յիշել նոզ-  
կանք կ'ազգէ մարդուն: Սաչագործե-  
րու սոյն խառնակուս խուճը, խար-  
դաւանքի և ազգին դէմ դաւադրու-  
թիւն նիւթողներու սեւ մարմնացումն  
է և պիտի մնայ միշտ մեր առջև:

Աննոզիւերը, երեսնին գոմէջի կա-  
շի քաշած, շիկնիլը շատոնց մոռցած,  
դեռ կը ջանան օրհասականի խեղդը կ'  
հոնգիւններով հն ինչ գալ ճամբարու-  
թեան շանթահարիչ ճիւղանէն օձիքնին  
ազատելու, անշուշտ լող իրենց մա-  
ղասաւոր կիրքը և ազձաւոր «ես»ը  
հոգալ ու յազգեցնելու համար, ալ  
մէկդի թողլով անպատկառօրէն խզի  
խայթն և արժանապատուութեան  
վեհ զոյցուցումը:

Անխճածները, կադին, կոյրին, աղ-  
քասին, աշխատաւորին, այրիին և  
արամբիին, սրաէն վրթած, հաջէն  
կտրած, քրտինքէն զոյցած մօտ հա-  
րիւր հազար Ֆրանքը, զոր պարտէին  
«անպայման կերպով» գործածել ա-  
րիւնչուայ հայրենիքին ազատու-  
թիւնն գնելու, հայուն արցունքը  
սրբիլու, կերտին զայն ցոփ յոփու-  
թեան մէջ՝ լքալ Փափազեանի պաշ-  
տած «սթիլ» լքով պարարուելով:

Այո՛, բրին այս անգուլ ոճիրը բայց  
յեղ. պատմութիւնը այս վատնուն-  
ները իրենց ինկածութիւնով և ան-  
հանգուժելի գեծնաքարչու-  
թիւնովը յայտնեց ներկային և պիտի  
հասցնէ անվրէպ նաեւ ապագայ սե-  
րունդին յաւիտենական թուր ու  
մուրին:

Արդէն ատոնց արդին ուղղուած ա-  
ռաջին հարուածը տղուցալ Միաց-  
եա Հնչ, կուսակցութեան «պատգա-  
մաւորական ժողովին» պաշտօնական  
յայտարարութիւնովը որ ժամանա-  
կագրական որոշ կարգով մերկապա-  
րանոց կ'ընէ վերը յիշուած հրէշներու  
հրոսային արարքը: «Ամենեւին ար-  
գարանալու կողմ շուշին»:

Միջերեսուն միակ պր. Սուշիտուն  
մարդավայել ազնուութիւնն ունեցաւ  
չափաւոր ու պատշաճ քաջատրութիւն  
մը տալ, որ եթէ արգարացում մ'ալ  
չէր, գոնէ իր ներքին մաքրութիւնը  
ցուցնող մեղմացում մէր:

Իսկ գալով Չիթճեանի «Բիշ մը դա-  
տողութիւն» վերնագրով հերքումին  
իրաւ մարդ կ'արգահատի կը մնայ,  
նկատելով թէ՛ այդ գրածը իրեն գէմ  
եղած հիմնաւոր միազորանքներուն  
պատասխա՞ւ մը չըլլալէ զատ, զուտ  
պատրուակ մը կամ աղտոտութիւնը  
ձածկել ջանացող բռնազօրիկ դար-  
ձուած մէր: Զարմանալի բան, այդ  
պատուելին հակառակ իր հոնտորի  
անամէջ հարաւին—անմիտներու հա-  
մար—գոնէ զարոցական տասը տա-  
րեկան աղու մը չափ ալ չէ՛ր յաջողած  
իր ճառ պաշտպանողականի մէջ:

Ահա մարդ մը, որ կը յանգզի լզա-  
տողութեան» դատեր հրամայել ուրիշ-  
ներու, մինչդեռ իր գրածին մէջ այդ  
կէտը շօշափող պարբերութիւն մ'ալ  
չը կար. և այդպէս պէտք էր ըլլար  
քանի այդ մարդուկ իր ղգաողու-  
թիւնը բանաւոր ըղբէն, խիղճէն և  
կամ սրտին թեզգորումէն չէր պարտա-  
բերէր, ալ այդ գովելի ազգականքը  
խեղդել կը ճգնէր:

Ամէն շարիքներու արատ ըլլալ,  
Ամերիկայէն Լոնտոն հասնիլ, կազմա-  
կերպութիւնը խառնակել, ջղատել,

աւերել սաղայեւական ծրագիրներով  
եւ եաքէն ալ ելնել կաղկանձել վերա-  
կին վրայ ջուր լինելու է և ոչ թէ  
իւզ», ո՞վ եղաւ իւզը թափողը, նոյն  
ինքն իր «պատակաբիշ» անձը, թշուա-  
ռականը, ալ իրեն և իրեններուն  
պնդափոխի անկողմը աչքին առջեւ  
ցուած տեսնելով, ճարահատ ու  
փեղծաւորութեան զօրակրումին տակ,  
մեղաւորի զըջացող արցունքները կը  
թափէ, միւսթեան ամբապնդումը կը  
բարբաջէ: Բայց իր «բարի» խրատը  
իրեն, արդէն օրինաւոր կեղորներ և  
անոր կանոնաւոր մասնաճիւղերը սեր-  
տօրէն միացած են, ալ ևս Չիթ-  
ճեանի հետ իր «գաւառ» եօլաշարիչե-  
րուն հացը կարելու ու կարելի հոգի-  
նին տանելու պայմանով:

Այս բաները լաւ ըմբռնելով մէկ-  
տեղ, մի կարծէք թէ օձիքնիդ աժան  
պիտի ապատէք Պառակլիչ պարոն,  
օ՛ն պատասխանեցէք շուտով:

Առաջին. ո՛ւր է ազգին 20000 տօ-  
ւարը:

Բ. Ինչո՞ւ չամչցած ապօրինի կեղ-  
րոն, պիտակ հնչակ և կեղծ կնիք  
կաղապարելու անլուր այլանդակու-  
թիւնը ըրիք:

Գ. Ինչո՞ւ ձեր ստանձնած միսսիան  
լրբարար ու չարաչար գործածեցիք:

Դ. Ինչո՞ւ ուսանալերը—որոնք յե-  
ղափոխութեան հոգին են արտաքսե-  
ւու դաւադրութիւնն յղացաք. միթէ  
անոնք հայեր ու հայրենիքի դաւակ-  
ներ չե՞ն. միթէ կուսակցութեան որ մեր  
յեղափոխական վարպետները Աշտա-  
րակցի, Բամար-Բամիլիպ, Ռաֆֆի  
Արծրունի, Նալպանտեանց և Դո-  
ղուխեան Ռուսահայեր չե՞ն, միթէ  
նոյնիսկ այսօրուան Հնչ և Դաշնակ-  
ցութիւն անձուէր հերոսներն ու  
պարագալու խնդր Ռուսահայեր չե՞ն:

Եւ ինչո՞ւ այս ազգակորսան խո-  
րութիւն, ո՞վ վատեր ի՞նչ քաջե-  
րու գործը ձեզ դուր չգա՛ր, Նապաս-  
տակներ, շահատակելու ազատ ա-  
պարէ՞ղ կուզէք. ալ հերիք է:

Եւ Հայ յեղափոխական Դաշնակ-  
ցութիւնը տապալել կը ջանաք ան-  
մտօրէն, դեռ չէ՞ք գիտեր որ անոր  
մարտի ժողովուրդին սրտին մէջ և  
Արարատի ազատամտին վրայ գրուած  
են և ոչ թէ ձեր հերձուածին պէս  
մոխիրի վրայ կանգնած որ ամենա-  
մեղմ հովէն կը տապալի, ինչպէս ե-  
ղա՛ր:

Զ. Հնչ Միացեալ կեղորնի երկու  
կարճ նամակները հրատարակեցիք  
իրիւս արդարացում, Արդեօք ատոնք  
փաստե՞ր կը նկատէք, ես կը յարեմ  
որ վատութիւննիդ հեղ մըն ալ  
չնշող շեյտեր են ատոնք. վասնզի  
կեղորներ հոգեկան ազնուութեամբ,  
ձեր վրայ իբրեւ մարդ հաւատար-  
մութիւն գոյացնելով լիազօրութեան  
պաշտօնով կը զրկէ ձեզ դուրս. մինչ-  
դեռ դուք դեռ Լոնտոն հասած օ-  
րիցնիդ կամ քիչ վերջը սեւ գոյներ-  
նիդ դուրս կը գայտեցնէք և յանձ-  
նաւորութիւններ կանանցաբար  
կատարելու ամօթը կըզ-  
գենուք:

Ազգին 20000 տօլար արիւն կը պա-  
հանցի:

Վերջապէս, ինչպէս ամեն տեղի,  
նոյնպէս ևս մանաւանդ Ռուսմանիս  
բոլոր մասնաճիւղերը ձեր վրայ այլ  
ևս զարգանքով թքնելէ վերջ, ա-  
նարգանքի խոշոր բաժին մըն ալ կը  
հանէ կը հանէ փաստացաւոր սօժրա  
Գորակթ օղուին կամ Երզնկայի Պար-  
խար լոններու քրդոտ արթուն, որ  
ասկէ առաջ քանի մը սնտուկի խնդ-  
րոյն մէջ իր առջային ոռնոցներով

ամենուս խնդուքը կը խլէր, իսկ  
հիմա 20000 տօլարին հանդէպ կեն-  
դանային անզգայութիւն և դաւաճա-  
նական համակերպութիւն կը պահէ,  
ու չամչնար ալ ելիւ Արդուամենանի  
մի անձնական անպաշտօն նամակը—  
ի նպատակաւ անզգայութիւն — դաւադրու-  
թիւն կը հոչակէ: Պէտք է պիտալ  
սակայն թէ Նազար-Բէկ-Իր բոլոր  
թերութիւններով մէկտեղ—տասնա-  
կան հատ Արդուան, Գրիգորեան,  
Շահրիման, Չիթճեան և Գուրպէթ-  
օղլու կարծէ, քանի որ բացի ար-  
դուամենանէ շատերու համակրանքը  
կը վայելէ դեռ այդ արփիարական  
ստոր ինթրիքներու զոնը:

Սոսքերնիս վերջացնէ՛յ յառաջ,  
շատ կը փափայլէինք որ Չիթճեան  
համարձակութիւն ունենար Ռուսա-  
նիս ալ անձնիլ, իր գէմ եղած զը-  
ուանք ու զայրոյթի համը մօտէն  
առնելու համար, Ազգագա՛ւ վատեր:  
ՍՍՐԱՍՓ  
Պուզրէշ

ՆԱՍՍԿ ԹԱՐԱՊԼՈՒՉԷՆ

Սյուր, Թարապուզէն ընկերէս  
ստացած նամակի մի քանի տեղե-  
կութիւնները չեմ զլանար շարժու-  
մի ընթերցողաց հաղորդել:

Թարապուզ 2/15 մարտ

Սիրելի ընկեր,

«Տեղիս վիճակն ալ որ կը հարցու-  
նես» շատ գէշ է, կատարութիւնը  
մեծ մտատանջութեան մէջ է, այն է  
արապական մեծ ապստամբութիւնը  
կատարութեան դէմ գիտուող շրտա-  
լու համար, Որովհետեւ կատարու-  
թեան օրէնքն համեմատ, մարտ մէ-  
կէն արապներէն զինուոր պիտի առ-  
նէր, Այժմ արաբները բոլորովին հա-  
կատակ են: Բաղաճիս գիտուողները  
զէնքի տակ են: Ոսկերիչներու խա-  
նութիւնը բոլորովին գոցուեցան:  
Հիւսկատոնները մեծ ուշադրութեամբ  
ու հետաքրքրութեամբ հանդիսատես  
են: Պօլիս հետագիւրներու զարտուիլը  
անհամար է: Ապստամբութիւնը վեր-  
ջին ծայր կատարի է...: Արդիւնքը  
կը գրեմ հետզհետէ»:

ՆՇԱՆ  
8 մարտ 1903  
Յիլիպէ

Փ. Պօլիս 9 մարտ 1903

Ինձմէ չկախուած ու շնախա-  
տեսուած հանգամանքներու պատ-  
ճառով յօղուած իս շարունակու-  
թիւնը ուշացնել հարկադրուե-  
ցայ. ասոր համար ընթերցողին  
ներողամտութիւնը կը խնդրեմ:  
Այս առթիւ տեղեցնեմ թէ պի-  
տի խօսիմ նաեւ Պ. Վալդօօին ա-  
ճապարուած, հարեւանցի փաս-  
տերու վրայ չհիմնուած «նախա-  
բան»ին մասին(»)

Ա. Յայրքեան

Մ.—Պատասխանեցէք, ամենայն  
կերպով ազատ էք: Այդ պատաս-  
խաններով է որ խնդիրը կը պարզուի:  
Վարդօ

### ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Հակառակ Բարձ. Դրան յայտարարութեան ոչ մէկ Մակեղոնացի փախստական Պուլկարիայէն երկիր չէ վերադարձած, չը նայած թուրք և թէ պուլկար կառավարութեան կրկնակի հրաւերին, Ընդհակառակը սահմանագլուխներէն եկողները կը հաստատեն որ Մակեղոնիայէն ամեն օր նոր փախստականներ կուգան Պուլկարիա. ու կը յայտարարեն թէ ոչ բարենորոգումներու խոստումները և ոչ ծրագիրը իրենց վստահութիւն կը ներշնչէ:

—Ալպանացիները ամեն ճիգ կը թափեն հին Սերպիան աւերակ դարձնել իրենց արշաւանքներով. ասոնք մինչև Սերպիոյ սահմանները կը հասնին և վստահը հասցնեն ընակիչներուն, և սերպ սահմանապահ զինուորներուն:

Սերպիական կառավարութիւնը հակառակ իր խաղաղասիրութեան, տրամադրուած է զինուորական միջոցներ ձեռք առնել իր սահմանները պաշտպանելու համար, որովհետև Սուլթանը անոր պահանջներուն, հակառակ ուստիոյ պաշտպանութեան, կարելու չի տար:

Իսկիւրի Սուրբ Փրկիչ եկեղեցուն խնդիրը, որուն համար քանի տարիներէ ի վեր յոյները և սերպերը կը կուռին, աւելի սուր կէտ պարանք սուած է. որովհետև պատրիարքը վերջերս այդ խնդիրը կարգադրած է հետեւեալ կերպով. եկեղեցին յանձնած է սերպերուն, իսկ մէջի զարդերը և պարագաները յոյներուն: Այդ տեսակ բաժանումը երկու ցեղերը իրարու դէմ աւելի զրգոթած է:

Մեծ ցոյց մը տեղի ունեցեր Պուլտոյ յոյն պատրիարքին դէմ ինչպէս նաև Թերմոլիան եպիսկոպոսին դէմ, թէև այս վերջինը պատրիարքի այդ որոշումին դէմ բողոքած է:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մարտ 11ին Բ. Դուրը՝ Ռուս և Աւստրիական զեսպաններուն ներկայացուցած են բարենորոգումներուն կանոնագիրքը ինչպէս նաև երեք վիլայէթներուն մէջ բացուելիք պանդ օթոմանին ճիւղերուն գործառնութեան կանոնագրերը. Այդ կանոնագրերը հրատարակուած չեն: Եկոտրայի ժանտարմներուն պետ Էսատ փաշան լեռնային կաթոլիկ ցեղի մը հանդէպ զեղծումներ ըրած ըլլալուն համար աւստրիական զեսպանը Բ. Դրան բողոքած է:

—Բրիւզընէն Պէլկրաս հասած

տեղեկութիւններու համաձայն բազմաթիւ ալպանացիներ հաւաքուեր են Բրիւզընին քովերը և սարսափ կազմեն բնակիչներուն: Խանութները գոցուած են, բայց իրողութիւնը ան է որ այդ օրը Ալպանացիները ժողով կազմեր են և որոշեր են Բրիւզընը պաշարել երբ հոն բարենորոգումներ մտցուին:

—Թուրք կառավարութիւնը Մակեղոնիա դաջող շէտացի սպաներուն ամսական 50 սակի պիտի վճարէ:

—Սպարապետութիւնը որոշած է Մակեղոնիոյ սահմանագծին կարելուր կէտերը հեռագրական թելով միացնել սահմանագլուխը հրոստիսներէն աւելի լաւ պահպանելու համար:

### ՊՈՒԼԿԱՐԻԱ

Նախարարական տազնապը դեռ կը շարունակուի: Փէնէրալ Բարբրիքով թէև հրատարականք տուած կը շարունակէ պաշտօնը կատարել մինչև և նոր նախարարին ընտրուիլը:

—Մակեղոնացի գործիչ գնդապետ Եանքօֆ տասը հազար Ֆրանքի երաշխատորութեամբ աղատ պիտի արձակուի:

—Մ. Բ. կոմիթէի նախագահ Միխայէլովսքի անցեալ օր Սօֆիայի մէջ բանախօսութիւն մը ըրեր է Մակեղոնական խնդրի մասին և յայտարարեր էր որ պուլկար կառավարութեան ձեռք առած միջոցները չը պիտի կարենան կասեցնել Մակեղոնիոյ պատմութիւնը: Նաև յայտարարած է որ ինք արդէն հրատարած է նախագահութենէ, որովհետև մակեղոնական խնդիրը բաւական ժողովրդականացաւ:

### Ա Ի Ս Տ Ր Ի Ա

Անցեալ օր Պուտաֆէշթայի մէջ լուր տարածուեր էր որ ոստիկանութիւնը երկու ուսանող սպաներ է ընդհարումի մը միջոցին: Միև առաւօտը ուսանողները հաւաքուեր են համալսարանին առջեւը, պահանջել են որ համալսարանին վրայ սեւ դրօշակներ շարձարցուին: Քօշուրի կուսակից երեսփոխանները ճառեր արտասաներ են և ուսանողները հրաւիրեր են ցոյց ընել երեսփոխանական ժողովարանին առջեւը եւ 10 հոգիէ կազմուած պատգամաւորութիւն մը Յրանս Քօշուրի առաջնորդութեամբ շրկեր են նախարարապետէն պահանջելու որ ոստիկանապետը պաշտօնակն ըլլայ:

Ատկէ յետոյ երեսփոխանական ժողովին մէջ մեծ ալմուկ բարձ-

րացեր է, որովհետև նախարարապետը ուզեր է ոստիկանութիւնը պաշտպանել: Վերջապէս նախարարապետը յայտներ է որ ոստիկանապետը պաշտօնէն պիտի հրաժարեցնէ:

### Յ Ր Ա Ն Ս Ա

Բարիկի օթէլներէն միոյն մէջ անձնասպան եղեր է անգլիացի զօրավար Մակտոնալդ, որ Յէլլօն կղզիին մէջ կը ծառայէր: Անձնասպանութեան պատճառը այն է որ կղզիին ընդհանուր կառավարիչը Մակտոնալդը դատարանաւորուած էր:

### Վ Ի Ռ Ն Ա Յ Ո Ւ Ն

Դուր ձեր նամակի մէջ գնդապետ Բերաձ կտորը սխալ է իք թարգմանած. թուրքերնի մէջ հայ յիզափոխական, Հայաստան և վաթ հայ խօսքերը չեն գործածուած: Ամօթ է այդպիսի խեղաթիւրումների գրգռելը:

Վ Ա Ր Դ Օ

### Կ Ը Փ Ն Տ Ռ Ո Ւ Ի

Կարապետ Յարութիւնեան 28-29 տարեկան չէկ ու երկայն պսխտրով, միջահասակ, երզնկայի Մահմուտցայ գիւղէն. 1902 թ. Եկ. 8ին Քօնսթանտնուպէն մեկնած գէպի իւր ծննդավայր երթալու. մինչ Տրապիզոն հասնելով անկէջ անյայտ կը ըլլայ. վերջերս կը հասկցուի որ յետ վերադարձուցած են. իր ազգականների կողմէն կը փնտառուի. տեղեկութիւն ունեցողներէ կը խնդրուի որ փութան հաղորդել խմբագրութեանս:

### ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Վ Ա Ջ Գ Է Ն. — ԵՐԳ Ի Ր Ա Ն

Բանաստեղծութեանց, ազգային, յեղափոխական, ժողովրդական և սիրային երգերու այս ճոխ հաւաքածոն մինչև հիմայ նմանօրինակ հրատարակութեանց ամէնքը կը գերազանցէ:

Բազկացած է 600 մեծադիր երեսներէ. զարգարուած է ընտիր թուղթի վրայ տպուած հայ նշանաւոր գէմքերու գեղեցիկ պատկերներով:

Քանի մը անձերու անհասակուն ջանքերով Ամերիկայի մէջ լոյս տեսած այս կարեւոր հրատարակութեան ամբողջ հասոյթը, յատկացուած է զուտ բարեօրական գործի մը. կարծէ որ ամէն հայ ունենայ այս գիրքէն հատ մը իր տան մէջ:

Պուլկարիոյ համար մասնաւոր զեղջեղած է և կը վաճառուի համեմատաբար աման գինով, ոսկեգրամ 5 Ֆրանքի: Փօստի ծախքը գնողը կը վճարէ:

Գնել փափաքողները կրնան գրիմել Կ. ՊիՕի Եկնի, ուսուցիչ ի Թիլիպէ:

ՅՐԱՆՍԱՅԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՎԻՊԱՍԱՆՆԵՐԷՆ Լ Ո Ւ Ի Ն Ո Ւ Ա Ռ Ի

### ԱՆԻՇԵԱԼ ՊԱՆՈՒԿԸ

Գերազանցապէս հետաքրքրաշարժ Առաջին մասը լրացաւ

Երկրորդ հատորը սկսաւ հաստարակուելը

Ամէն դասակարգի դիրամտաչելի ըլլալու համար գիրքը երկու մասով երևան կը լլայ (մէկ հատորի մէջ) եւ ամբողջութիւնը 52-54 թերթերէ պատրաստուայ:

Իւրաքանչիւր մասին բաժանորդագրին է վառնայի համար 1, 25. ուրիշ քաղաքներու և արտասահմանի 1, 50. իսկ ամբողջութեանը բաժնեգրին է, վառնայի համար 2, 50. և վառնայի դուրս 3 Ֆր. ձեռքէ առնողները պիտի վճարեն առաջուան պէս 8 երեսնոց պրակին 5 սանդիւմ:

Այն քաղաքները եւ կամ գիւղերը որ մէկէ աւելի բաժանորդ ունինք, միայն մէկ հասցէի տմէն շարժ իր կու պրակը մէկ ծրարով պիտի զրկուի. իսկ առանձին բաժանորդի պրակները ճ հատը մէկ ծրարով պիտի զրկուի. փութի ծախքը հրատարակչին վրայ է:

Փափագողները պէտք է գրին հետեւեալ հասցէին՝  
**imprimerie Orientale, Onnik Parseghlan Varna**  
 Դրամի փոխարէն նամակագրօժ մ կ'ընդունուի:

### Ա Ր Մ Է Ն Ի Ա

Լ ի Ա Ն Ի

(Հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ)

Գ Ր Ե Գ

Պ. Տ Օ Ն Ա Ս Կ Ե Ն Ա Ն

Գ Ր Ի Ն

2 1/2 շիլին 1 թր. 25 կոպ.

3 Ֆր. 60 սանթ

Դիմել աշխատասիրողին.

1:7 Կոստանթնուպոլիս

Հեղինակի Բոս

Լոստոն Մ.

### ՄԻՐԱՆԻ ԱՐԵՆԵԼՔԸ

Գրեց անգլիացի Ուիլիամ Ուոթսոնը՝ բանաստեղծը և հայերէնի թարգմանեց Խորով. կը ծախուի յիսուս ասն թիւի գրիմել թարգմանչին՝

Մ. ՄՐՄԷՆ ԱՐՏՕՆԸ

43 Տոկլու Բոս

Միսսոն (Անկղղիտ)

Եւ կամ Ռուրիկ Գրատպագմ օճեակի վառնալ

### Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна